— Ի՜նչ ահաւոր տեսարան, կանչեց Քէնընբոի զզուանքը։

— Զաղբելի անմիտներ են, ըսաւ ճոյ. սակայն եթէ զգեստի մասնաւոր տարազ մը ունենային, իրենք աշխարհիս ուրիշ պատերազմիկ մարդոց նման կ'ըլլային։

— Բուռն իղձ մը ունիմ ատոնց կըռուին մէջ մտնելու, ըսաւ որսորդը, քարապինան ձեռք առնելով։

— Ոչ երբեք, ըսաւ տաքութեամբ տոքդորը, ոչ երբեք. ինչ որ մեզի կ'ինայ անոր միայն խառնուինք. գիտես դու թէ յանցանքը կամ իրաւունքն որո՞ն է որ՝ նախախնամութեան ընելիքն ընես։ Կարելի եղածին չափ շուտ այդ զզուելի տեսարանէն փախչինք։ Եթէ մեծամեծ զօրավարները կարենային այսպէս բարձրէն տեսնալ իրենց քաջութեանց գործոց տեղիները, դուցէ արեան և աշխարհակալութեան ախորժ-նին կը կորսնցնէին։

Այս վայրենեաց մէկ կողմի գլխաւորն նշանաւոր էր իր մեծդի հասակաւը և հերքիւլական ուժովը. մէկ ձեռքովը նիզակը թշնամեաց խիտ կարգերուն մէջ կը խոթէր, և միւսովը կացնի հարուածներով ահագին ծակեր կը բանար։ Յանկարծ իր արեամբ թաթխուած ասկայիին հեռու նետեց, և վիրաւորածի մը վրայ յարձրկելով մէկ հարուածով թևը կտրեց, ու ձեռքովը վերցնելով բերանը տարաւ և սկսաւ անյագաբար խածնել և ուտել։

— Ա՜հ, կանչեց Քէնընբոի, զարհուրելի անասուն. ալ չեմ կրնար տանիլ։

Եւ անմիջապէս այն մարտիկը գնտակ մը ճակտին վրայ զարնուելով, կրունկին վրայ փռուեցաւ։

Ամոր անկմամբը բոլոր իր մարտիկները ապշեցան մնացին. այդ գերբնական մահը զիրենք զարհուրեցնելով իրենց հակառակորդներուն ոգիքը բորբոքեց, մանաւանդ որ մէկ ակնթարթի մը մէջ կռուողներուն կէսը կռուի դաշտէն անհետացան։

— Քիչ մը վեր ելլենք որ մեզ քալցընելու հոսանք մը գտնանք, ըսաւ տոքդորը։ Այդ տեսարանէն սիրտս լքած է։

Բայց չկրցաւ այնպէս շուտ փախչիլ որ յաղթականաց մեռածներուն ու վիրաւորեալներուն վրայ յարձրկիլը չտեսնայ, որոնք այն դեռ ևս տաք միսը մէկմէկու ձեռքէն յափշտակելով անյագաբար կ'ուտէին։

— Բուհ, ըրաւ ճոյ, այդ բանը զզուում կը բերէ։

Վիկտորիան ձգտելով կը բարձրանար. քիչ մը ատեն այն մոլեգին բազմութեան ոռնացող ձայներն զինքը հալածեցին. սակայն վերջապէս դէպ 'ի հարաւ քշուելով, այն ջարդէն ու մարդակեր տեսարանէն հեռացաւ։

Գետինը այն ատեն այլ և այլ կերպ երևոյթներ կը ներկայացնէր. ջրի բազմաթիւ հոսանքներ դէպ 'ի արևելք կը հոսէին. անշուշտ բոլոր այս ջրերն Նիլ լիճը կամ վթերու գետը թափուող ջրոց մէջ կը հոսէին, որուն վրայ Պ. Կիլեոմ Լրժան այնչափ հետաքրքրական տեղեկութիւններ գրեց։

Գիշերը վրայ գալով, Վիկտորիան, 150 մղոն ճամբայ ընելէն ետև, 27° երկայնութեան ու 4°, 20′ հիւսիսային լայնութեան տակ խարիսխ նետեց։

Կը շարունակուի։

Մ. ԱՏՏԻՂԻՈՍ ՀՌԵԳՈՒՂՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 126։)

ՀԱՆԴԷՍ Ե.

ՏԵՍԻԼ Ա.

ՀՌԵԳՈՒՂՈՍ, ՈՊՈ ՄԱՆԼԻՈՍ

Հռ. Իսկ արդ զի՞ գործէ. մինթէ զաւագանւոյն չգիտաց դեռ Ամիլկար զկամս. ո՞ւր է. խնդրեսցի. պարտ է ուղղոյ լինել։ Նորա այլ չիք ինչ յոյս աստանօր, և ոչ իմ ցանկութիւն. երկաքանչիւր

յանցանք են դանդաղել այլ ևս։ (փեռէտ զՄան.)
Ա՛հ, եկ, բարեկամ քաջ, եկ 'ի գիրկս իմ։ Ի վտանգի կայր առանց քո փառքն իմ. քև պահեցան ինձ կապանքս. քո են ամենայն արդասիք գերութեանս։

Ման. Այո՛, այլ դու գնաս 'ի մենջ. այո՛, այլ կորուսանեմք մեք զքեզ։

Հռ. Եթէ չէր գնացեալ, յայնժամ արդեօք կորուսանէիք։

Ման. Ա՛հ, ընդէ՞ր ընաւ այսպէս անագան սկսանիմ սիրել զքեզ։ Մինչև ցայժմ, Հռեգուղէ, ոչ ինչ այլ ընկալար գրաւական սիրոյ իմոյ, քան թէ վշտալիս միայն։

Հռ. Ի ճշմարիտ բարեկամէ առաւել ինչ ակն ունել ոչ կարէի։ Սակայն եթէ առատամիտ Մանլիոս աւելի ինչ ընձեռել կամիցի, և այլ խնդրեցից։

Ման. Ասա միայն։

Հռ. Զքաղաքացւոյ գլխաւորեալ զպարտս, առատ ուրեմն ինձ ընդ միոյ հարկանի զի հայր եմ։ Երկուս թողում որդեակս 'ի Հռովմ՝ զՊօպղիոս և զԱտտիղիոս. և սոքա են զկնի հայրենեացս առաջին և կաթոգին սէր սրտի իմոյ։ Բնաւորութիւն ոչ չափաւոր ինչ նշողէ 'ի նոսա. այլ տակաւին մատաղատունկք են և երկոքեան, և իմաստուն մըշակի կարօտք։ Ոչ հաճեցան երկինք յանկ հանել ինձ զգործն. ա՛հ, դու ընդ իմ զթասիրաբար խնամ տար նոցա, դու տօկոսեօք հատո նոցա զտոյժն։ Քում բարենախանձ սրտի երախտապարտս դաւանեսցեն և քոց խորհրդոց, հայրն զփառսն, և որդիքն զձեռնկալութիւն։

Ման. Այո, յիմ վերայ այդ ամենայն. զքաջուղէշ բարոնակդ խնամօք զգուշութեամբ տըքնեցայց պահել։ Ունիցին հայր թէ ո՛չ նոյնչափ արժանաւոր, գոնէ քև չափ գորովալէտ։ Զհռովմէական առաքինութեան ցուցից նոցա զշաւիղս, և ոչ մեծի քրտանց եղիցի ինձ։ Գեղեցիկ ցանկութեամբ բնաւորապէսն վառելոց հոգւոց, ըզվէպսն եթէ լսել չատ է զհայրենի գործոց։

Հռ. Արդարև ոչ ինչ այլ մնայ ինձ այժմ...

ՏԵՍԻԼ Բ

ՀՌԵԳՈՒՂՈՍ, ՊՕՊՂԻՈՍ, ՄԱՆԼԻՈՍ

Պօպ. Մանլիէ, հայր։

Հռ. Զի՞նչ իրք իցեն։

Պօպ. Հռովմ առ հասարակ վէր 'ի վայր փոթորկի. խուժանն մինչէ, գնալ քեզ ոչ ներէ։

Հռ. Իսկ արդ իցէ՞ թէ ստուգութեամբ ամօթապարտ փոխանակութեանն ցանկասցի Հռովմ։

Պօպ. Ոչ, ոչ փոխանակութիւն, ոչ խաղաղութիւն խնդրէ Հռովմ. կամի զի կացցես դու։

Հռ. Ե՞ս. ո՞րպէս. իսկ խոստմունքն. իսկ երդո՞ւմնքն։

Պօպ. Առ հասարակ գոչեն թէ առ նենգաւորս չէ արժան պահել հաւատարմութիւն։

Հռ. Ապա ուրեմն միով յանցանօք՝ միւսն արդարանայ. և ո՞ այնուհետև գտցի պարտաւոր, եթէ օրինակն ևեթ իրաւ առնիցէ։

Պօպ. Հաւագիտացն ակումբ առեալ ուխտ կաճառի այժմիկ. անդ դժուարին տարակուսանացս հատցի վճիռ։

Հռ. Այդմ պատգամի չեն ինձ պէտք. գիտեմ զի խոստացայ, կամիմ գնալ։ Իշխանութիւն ունի Հռովմ զխաղաղութիւն կամ զփոխանակութիւն 'ի հարցփորձ մատուցանել. իմոյ դարձի հոգ՝ ինձ անկանի։ Այն հասարակաց, այս առանձնական է գործ։ Ոչ ևս եմ որ ինչ էին. և Հռովմ չունի ինչ իրաւունս առ ծառայս օտարին։

Պօպ. Մնասցուք գէթ վճռոյ հաւահմայիցն։

Հռ. Ոչ. եթէ նմա մնացից, հաւանող լինիմ հրամանաց նոցա։ Պահնակքդ, 'ի նաւահանգիստ։ Ողջամբ մնա, բարեկամ։

Ման. Մի՛, Հռեգուղէ. եթէ գնաս 'ի չփոթ ամբոխին, բռնի արգելցեն զքեզ. և այնպէս ողջոյն իսկ զՀռովմ ուխտանենգութեան գնես պարտաւոր։

Հռ. Իսկ զի՞նչ ապա, ես գրժեցից։

Ման. Ոչ. գնասցես այո՛. սակայն թոյլ տուր երթայց նախ լռեցուցից զմրրիկն զայն։ Հիւպատոսականս իշխանութիւն իցէ թէ զգօնացուսցէ ըզմոլեգնութիւն նորա։

Հռ. Ի քո հաւատարմութիւն ապաստան՝ ահա մնամ, Մանլիէ. սակայն...

Ման. Բա՛ւ է, խելամուտ եմ. փառացդ փափաքեմ և ճանաչեմ զսիրտդ. վստահ լեր և դու յիմս։ Մի՛ զանգիտեր. յիշեմ զի և ես ինքն Հռովմայեցի ծնայ. քեզ նման զգամ և ես 'ի ծոցի կայծակունս փառաց։ Ապաքէն զլանայ ինձ բաղդըն զկապանս քո պանծալիս. սակայն եթէ տարապարտուց ինչ ցանկանամ նոցա, գիտեմ գոնեայ լինել արժանի (ելանէ)։

ՏԵՍԻԼ Գ

ՀՌԵԳՈՒՂՈՍ, ՊՕՊՂԻՈՍ

Հռ. Ա՞յսչափ ծանրագնի իցէ այժմ 'ի Հռովմ ուխտապահութիւն, և ա՞յսչափ քրտանց։ Ապա... Ա՛հ, Պօպղիէ, և դու աստէ՞ն կաս. ա՞յսպէս պղերգութեամբ 'ի բարեկամն թողուս բովանդակ զպատիւ օժանդակութեանս. ո՛ն, ընթա՛ և դու սատարել չուոյ ուղևորութեանս։ Մեծի այսմ բարերարութեան շնորհապարտ առ որդեակն իմ ըղձայի գտանել։

Պօպ. Ա՛հ, սիրելի հայր, հպատակեցից, սակայն...

Հռ. Զի՞նչ. յոգւո՞ց ելանես. այդ հեծութիւն տառապելոյ անձին է նշանակ։

Պօպ. Այո՛, խոստովանիմ և ես. թուիմ անշնչանալ. սակայն և այս անողորմ երաշխեալ իմոյ արութեանս է ճոխաբար արդիւնք։ Եթէ այսմ սրտի թեթև ինչ գործ էր յաղթանակել կրից՝ զի՞նչ էր նուէրս զոր ձօնէի քեզ, հայր (ելանէ)։

ՏԵՍԻԼ Դ

ՀՌԵԳՈՒՂՈՍ, ԱՄԻԼԿԱՐ

Ամիլ. Հռեգուղոս, ա՞յսպէս ապա ուրեմն...

Հռ. Զև խօսեալ, իմանամ զզանգատանացդ։ Մի՛

1
2
3
4

9
8
14
15
13
12
M. De Olfs.

ինչ խուճապեցէ զքեզ շրջնդն խուժանին. Հռէ-
գուլոս կենդանեաւ ոչ մնացէ 'ի Հռովմ։

Ատիլ. Զգիտեմ զոր աղմուկ ասէս։ Իմ և ոչ մի
ինչ բողոք առ քեզ ոչ է։ Ես եկի հաւատալ
քեզ, եթէ ոչ զՏիբերիոյ միայն ափամբ ծնանին
գիւղաղունք. են են և առ մեզ հոգիք քաջազանց։

Հռ. Իցեն արդեօք. ոչ այս ժամանակ է ընդ վայր
մրցանաց։ Ժողովեա զքոյդ, պատրաստ լեր 'ի
չու։

Ատիլ. Ո՛չ այդպէս. լուր ինձ նախ, և տուր պա-
տասխանի։

Հռ. (Ո՛հ նեղսրտութեանս)։

Ատիլ. Իցէ՞ ինչ արդեօք փառք երախտագիտու-
թիւն։

Հռ. Երախտագիտութիւն օրէնք են. սակայն այն-
չափ վերջացեալ գառնիմք յօրինաց այսի, մինչ
զի փառք են այժմ՝ եթէ կատարեսցէ ոք։

Ատիլ. Իսկ եթէ կատարումն բաղմավաստնդ իցէ։

Հռ. Բարգաւաճ առաքինութեան տանի. յայն-
ժամ պարծանս։

Ատիլ. Ապա զդոյն պարծանս զլանալ յինէն ոչ
ունիս. լուր։ Որդին քո իւրում փառացն վրէժ-
խնդիր՝ դարձուցանէ յիս զիմս Մագոն, թէ-
պէտ և հարեալ է 'ի նա։ Դամ և ես ազատաբար
ապրեցուցանել նմա զհայրն, թէ և սրտմտու-
թեան Կարքեդոնի թիրախ արձանանամ։

Հռ. Դո՞ւ զիս ապրեցուցանել կամիս։

Ատիլ. Ես ինքն։

Հռ. Զի՞նչպիսի օրինակաւ։

Ատիլ. Թոյլ տամ քեզ պարտուլ փախստի։ Զա-
տուցից 'ի քէն հնարիւք զպահապանսդ։ Դու
զգուշութեամբ թաքիր 'ի Հռովմ, մինչև վերջ
'ի վերոյ ցատմամբ առից ես անդուստ զնարիսխան։

Հռ. (Գաղտ)։ Բիրտ, անհեգեդ։

Ատիլ. Արդ ազէ զինչ ասես. զարմանամ ընդ շը-
նորհս։

Հռ. Կարի յոյժ։

Ատիլ. Ունէիր ինչ յինէն այդմ ակն։

Հռ. Ոչ բնաւ։

Ատիլ. Սակայն ահա ոչ ունիմ զբաղդ Հռովմայե-
ցի լինելոյն։

Հռ. Քաջ իսկ երևի։

Ատիլ. Երթայք 'ի բաց պահապանքդ։

Հռ. Մի՞ ոք գնասցէ։

Ատիլ. Առ ի՞նչ։

Հռ. Շնորհ ունիմ բարերարութեանդ, սակայն
ընդ քեզ գամ։

Ատիլ. Արհամարհեա ուրեմն զգուեթ իմ։

Հռ. Ո՛չ, այլ ողորմիմ քեզ։ Տգէտ ես առաքի-
նութեան. զառաքինութիւն խրոխտանաս, և
ինձ, հայրենեացդ, քեզ ինքնին 'ի գլխովին մեծ
հասուցանես։

Ատիլ. Ե՞ս։

Հռ. Այո՛. զիա՞րդ արձակուրդ շնորհես ինձ։ Ո՞ւ,
եթէ Կարքեդոնի իցեմ ես ծառայ։

Ատիլ. Զի՞ փոյթ է քննել եթէ բարերարութիւնն
յումմէ...

Հռ. Բարերարութիւն արդարև սքանչելի. մեա-
սապարտ կացուցանել զիս, փախստական, սրտ-
երդումն...

Ատիլ. Այլ կեանք քո խնդրին ասատնօր։ Գի-
տիցես որպիսի, կարծրագոյն տանջանարանս
կազմեաց քեզ Կարքեդոն. գիտիցես զոր խոշ-
տանգանս հեղցեն անդ զքեզ։

Հռ. Սակայն ճանաչես և դու Ամիլկար զՀռոմա-
յեցիս. գիտիցես՝ զի նոցա կեանք փառքն են, և
այն եւթէ է մարակ գործոց նոցա, կշիռ և վախ-
ճան։ Ասա ուսանի մարդ անփոփոխ երեսօք մե-
ռանել. ասա ծաղր լինին ամենայն կոչկոճանք,
եթէ փառս միայն ծնանիցին. և վատութիւն
եւթէ ասասնօր գիտէ երկեղուկս արկանել։

Ատիլ. Փարթամ ճոռոմութիւնք, գեղեցիկ 'ի լսել.
սակայն տարաժամ է ընդ իս մեծախրոխտ այդ
լեզու։ Գիտեմ ես ամենեցուն սիրելի գոլ ըզ-
կեանս, և դու ինքնին...

Հռ. Ա՛հ, անցեր զանցեր՝ երկայնմտութեամբս
զեղծանել։ Հանգերձեա՛ զնաւան, Ժողովեա՛ զու-
ղեկիցսդ, զպարտսդ կատարեա՛, վայրագ անարի,
և լռեցո՛ զլեզուդ։

Ատիլ. Հա՛պա, կերպարանեա՛ց զարիութիւն, խա-
ղա՛ զինև սոնքացեալ բանիւք, զգթութիւնս իմ
կոչեա՛ վայրենի։ Ամիլկար առ Տիբերի լսէ քեզ
և զմրի. սակայն հուպ առ հուպ 'ի Լիբիա ասցէ
քեզ պատասխանի։ (Ելանէ)։

Հռ. Եւ դեռ ոչ դառնայ Պոպլիոս։ Եւ Մանլիոս...
Եղո՛ւկ եմ. յայդ ցնծութիւն և յայդ խուճապ
տագնապի զինչ լուր ունիցիս, Ատոիլիէ։

ՏԵՍԻԼԵ

ՊՈՊՊԻՈՍ, ԱՏՏԻՊԻՈՍ, ՀՌԵԳՈՒԼՈՍ

Ատ. Բաղդ մեր զքէն կախի. ահա 'ի Հռովմ 'ի
խորհուրդս քո ապատասան՝ ոչ փոխանակութիւն
յանձին ունի և ոչ խաղաղութիւն. սակայն դու
կարես մնալ։

Հռ. Այո՛, յամենի երեսաց...

Ատ. Ոչ բնաւ աւագամեծարն առեան զայսր իրի
հնչեցոյց սահման. տեր ես երթալոյ և մնալոյ։

Երդուար դու անդէն 'ի կապարանի.
Եւ որ չէ ազատ՝ իշխան չէ ուխտի։

Հռ. Ազատ է յամենայն ժամ որ գիտէ մեռանել։
Որ զայլոյ զօրութիւն բամբասէ՝ զիւրն վատու-
թիւն լինի խոստովան։ Երդուայ՝ զի կամեցայ.
կամիմ գնալ՝ քանզի երդուայ։

Պոպ. Սակայն 'ի նանիր ակն ունիս այդմ, տեր
իմ։

Հռ. Եւ ո՞ այն որ խափանիցէ։

Պոպ. Ժողովուրդն առ հասարակ, ով հայր, նա
արդ անբաւական է սանձից։ Ամենեքին գրոհ
տուեալ աճապարեն արշաւասոյր 'ի նաւահան-
գիստն կոյս առ 'ի փակելոյ քեզ զանցս նաւացն.
այլ փողոցք Հռովմայ ամայանան առ հասարակ։

Հռ. Իսկ Մանլիոս...։

Պոպ. Նա միայնակ ընդդէմ բոլոր բառնայ հա-
սարակաց բարբոյն. աղաչէ, սատէ. բայց բո-
վանդակն վայրապար։ Ոչ ոք է որ լսէ նմա, և
ոչ այն որ հնազանդ լինիցի։ Գամ քան զգամ
զայրանայ մոլեգնութիւն խուժանին։ Ի բա-
զուկս գունատեալ նուիրակացն դողդոջեն տա-
պարք. և յայնքան սատկութենէ ամբոխին ոչ
գտանէ զոք իւր պաշտօնեայ իշխանութիւնն հիւ-
պատոսական։

ՀՌ. Ատոիղիէ, ձեռ խաղաղութեամբ. եկ ընդ իս, Պոպղիէ (ԻԲՐԻ ԻԷ ԳՆԱՅՔ)։

ԱՏ. Ցո՞վ։

ՀՌ. Ի թիկունս կալ բարեկամին. յանդիման հարկանել Հռովմայ զանօրէնութիւն իւր, պահել ինձ զպարծանս կապանաց իմոց. գնալ յերկրէ ասոի կամ ասէն մեռանել (ԳՆԱԼՎ)։

ԱՏ. Ա՜հ, հայր. ա՜հ, քա՜ մեզ. եթէ Թողուս զիս... (ԼԱԼՎ)։

ՀՌ. (Մանր առանց ցասման)։ Ատոիղիէ, բազում ինչ ներեցի ցարդ յանուն որդեկի, և հասակիդ. շատ է արդ՝ շատ են այքան արտասուք։ Առ 'ի զերծանելոյ յինէն զյաղթանակիս մեծի զփառս՝ մի՛ և քո լալիւն միաբանեսցէ ընդ Հռովմայ։

ԱՏ. Ա՜հ, այնպիսի՛ է ինձ վիշտս... (ԼԱԼՎ)։

ՀՌ. Վի՛շտ մեծ է քեզ կորուսանել զիս, գիտեմ և ես. բայց այսչափ ինչ ապաքէն արժէ պատիւն Հռովմայեցի գոլոյ։

ԱՏ. Ո՛ր ինչ այլ փորձք իցեն՝ պատրաստ եմ զամենայն...

ՀՌ. Եւ ո՞ր այն իցէ. միթէ քով իմաստութեամբ երթիցե՞ս յատեան հրապարակին բարձակից աւագանւոյ զՀռովմայն անտեսել բաղդ։ Իցէ՛ թէ սաղաւարտ 'ի գլուխ 'ի կռիւ շահատակիցես յաղթանակել թշնամեաց, և ընդ սպառազինութեամբդ ընդ քիրան մտանիցես։ Եթէ նեղութիւն ինչ 'ի վերայ հայրենեացդ յանձն առնուլ չես բաւական՝ առանց վատասրտութեան. ասա՛ զինչ ունիցիս առնել վասն նորա։

ԱՏ. Ճշմարիտ է. բայց արութիւն այդպիսի...։

ՀՌ. Դիժուարին տառաքինութիւն է. սակայն որդի իմ է Ատոիղիոս. պարտի ունել զայդ յանձին։

ԱՏ. Այո՛, այո՛, քաջազուն հայր. եղէց քեզ նմանող ըստ կարի. բայց... աւա՜ղ... բարկութեամբ գնաս դու յինէն. անկայ ես 'ի սիրոյ քումմէ։

ՀՌ. Փա՛ ինձ այդ, որդեակ իմ. սիրեմ ես զքեզ, չեմ ցասուցեալ. ահա և զողջոյնս զայս ընկալ առ յինէն առհաւատչեայ. սակայն այս ողջոյն՝ սրութիւն և պարծանս, ոչ մեղկութիւն շնչեսցէ 'ի քեզ։

ԱՏ. Ա՜հ, հայր ես, թողուս զիս, և ոչ ինչ ամենեւին յոգւոց եւանես։

ՀՌ. Հայր եմ, և ոչ լինիցի՝ եթէ որդեկացս վատութեան ինչ թողուի տարացոյց։ Այլոց պէս ունիմ սիրտ 'ի կուրծս. բայց յիս հպատակ են կիրք. 'ի ձեզ բռնաւոր (ԷԼՍՆԷ)։

ՏԵՍԻԼ Զ

ԱՏՏԻՂԻՈՍ, ապա ՄԱԳՈՆ

ԱՏ. Հապա, քաջ լեր սիրա իմ. մեղկաղէտ ախորժակք, տուք տեղի 'ի սրտէ ասոի. արդ ցամաքեցարուք զարտեւանամբքս, ողորմ արտասուք. ոչ ասկաւ հեղաւ արտօսր և դողումն ոչ չափաւորապէս դողացաք։ Ի հայրական սրտմտութեանն յարիցէ կանգնեսցի ընդակիցս իմ առաքինութիւն։ Եւ Ատոիղիոս մի ոստ մի ևեթ անարժան եղիցի մեծի այսր ծառոյ։

ՄԱԳ. Ատոիղիէ, ճշմարտութեամբ է ուրեմն։ Ուրեմն ընդ հակառակս ժողովրդեան, ծերակուտին, հաւագիտաց, մեզ և բոլոր աշխարհի գնա՛լ կամի Հռեգուղոս։

ԱՏ. Այո՛. (արիաբար)։

ՄԱԳ. Իսկ զի՞նչ այդ խօլական կատաղութիւն։

ԱՏ. Ակն ած սակաւիկ մի դիւցազանց, Մագոն (արիաբար)։

ՄԱԳ. Զի՞նչ. հաւանեա՛լ ես ընդ կամակոր խորհուրդս հօր քո։

ԱՏ. Զիմոյ հօրն պաշտեմ ես զանդրդուելի առաքինութիւն։

ՄԱԳ. Առաքինութի՞ն՝ որ 'ի կապանս, որ 'ի սրտմտութիւն այլոց, որ 'ի մահ անարգական անշուշտ հասուցանէ...

ԱՏ. (ԴԷՅԻԷ)։ Լո՛ւռ լեր. այն կապանք, այն սրտմտութիւն և այն մահ հօր իմոյ յաղթականք են։

ՄԱԳ. Եւ դու ցնծա՞ս ընդ այդ։

ԱՏ. (ԼՍՅ)։ Աւա՜ղ ինձ։

ՄԱԳ. Ոչ կարեմ իմանալ...

ԱՏ. Ո՛ր անբաղդութեամբ 'ի խուժադուժն միանգամ ծնաւ գաւառի, ոչ ունի նա իմանալ՝ զնա՛ բդ պարծանս հօր խնդասցէ որդին։

ՄԱԳ. Իսկ ընդէ՞ր բնաւ յարտասուս ցնդիս։

ԱՏ. Դառնայ հանդարտութիւն 'ի սիրտ՝ յորմէ ցաւն մրրկածին լուծանի յարտասուս։ Զոր օրինակ պարզեն երկինք, այն ինչ ամպրոպք բալաձիգք արձակին յանձրև (ԷԼՍՆԷ)։

ՏԵՍԻԼ Է

ՄԱԳՈՆ, ապա ՄԱՆԼԻՈՍ, ԼԻԿԻՆԻՈՍ, և այլք։

ՄԱԳ. Զի՞նչ այս չնաշխարհիկ խորհուրդք, զոր անձուկ տուփումն գովեստի բուսուցանէ 'ի Հռովմ։ Մանլիոս ընդ իւրոյ ախոյանին նախանձի ընդ կապանս, 'ի գթոյ հասարակաց գարշի Հռեգուղոս. խայտայ որդին ընդ չարչարանս հօրն։ Իսկ Պոպղիոս... ա՜հ, այս անցք 'ի վեր են քան զամենայն միտս. Պոպղիոս արբեալն փառասիրութեամբ՝ մոլեալ է յիս, և ձեռնթափ յինէն եղանի... ո՜հ, զի՞նչ է աղաղակս, մինչ այսր հասին...

ԼԻԿ. Ոչ, ոչ կամի Հռովմ զերթն Հռեգուղեայ։

ՄԱՆ. Իսկ ծերակո՞յտն, իսկ ե՞ս, չիցեմք մնան Հռովմայ։

ԼԻԿ. Ստուարագոյն է ժողովուրդն համօրէն։

ՄԱՆ. Բայց ոչ առողջագոյն։

ԼԻԿ. Գոնեա և ոչ անողորմագոյն. մեր երախտագէտ և սիրապատար սրտիւ եդեալ է 'ի մահ պահել Հռեգուղեայ զկեանսն։

ՄԱՆ. Եւ մեր՝ զփառսն։

ԼԻԿ. Փառքն...

ՄԱՆ. Շատ է. ոչ եկի շաղակրատել ընդ քեզ. օ՛ն, այր այր իւրաքանչիւր թողցէ համարձակ զանցս ուղղոյն։

ԼԻԿ. Օ՛ն, մի՛ դք խլրտեսցի։

ՄԱՆ. Ես տամ հրաման։

ԼԻԿ. Ես արգելում։

ՄԱՆ. Իշնէ՞ անգամ Լիկինիոս ընդ բդեշխին գալ 'ի վերս։

ԼԻԿ. Եւ համբուն ժպրհի Մանլիոս 'ի կռիւ կալ ընկիճել հաղարապետին։

Ման. Այժմ տեսանեմք. հապա, նուիրակք, հորդեսցի ուղի:

Լիկ. Կալարուք պինդ զանցան, ո՛ Հռովմայեցիք: (զայրացանէն նոքա):

Ման. Բարեկ, և զինուք անգամ իմոյ հրամանի ընդդէմ'ի վէդ գան: Այսպէս ինչ հիւսպատեանն մեծվայելչութիւն...

Լիկ. Ի Հռովմ մեծվայելչութիւն զժողովրդեամբն հանգչի. և դու երգիծուցանես զնա խաղմարարդ մրցութեամբ:

Ժող. Կացցէ՛ Հռեգուղոս:

Ման. (առ Ժող.): Ունկն դիք, թոյլ տուք ինձ նշաւակել զհաղբաղ:

Ժող. Հռեգուղոս կացցէ:

ՏԵՍԻԼ Ը

ՀՌԵԳՈՒՂՈՍ, ԱՏՏԻՂԻՈՍ, ՊՈԲՂԻՈՍ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ

Հռ. Կացցէ՛ Հռեգուղոս. և ես ականջալուր եմ այդմ. և ստիպիմ հաւատալ անձին իմոյ: Նենգութիւն պահանջի, պահանջի՝ ի Հռովմ, յինէն պահանջի: Որպիսի՞ ազգս ծնանի այժմ երկիրս այս: Ո՞ յղացաւ երբէք զայդ ցանկութիւն ամենալի. ո՞ սնոյց զդա. ո՞ւր են որդիքն Բրուտոսի, Փաբրիկեայ և Կամիլլոսի: Կացցէ՛ Հռեգուղոս... ա՜հ, երբ և վասն էր յանցանաց ատելութեան ձերում եղէ արժանի:

Լիկ. Մեր սէրն է, քաջդ, որ ցանկայ խորտակել զքոյին շղթայս:

Հռ. Իսկ առանց այդոցիկ զինչ լինիցի Հռեգուղոս: Սոքա զիս զկնեացն առնեն օրինակ բարի, թշնամեաց շառագունանս, հայրենեաց փառք: Եթէ՝ ի սոցանէ մերկ գտանիցիմ, ոչ ինչ այլ եմ, քան թէ գերի ուխտադրուժ և ինքնահալած:

Լիկ. Նենգաւորաց ուխտաւորեցար, ՝ի կապանս երդուար, և հաւադէտքն առ հասարակ...

Հռ. Է՜հ. Թող անդր՝ ի բաց՝ ի խուժն և՝ ի դուժ զանարժանդ զայդ նենգաւորութեամբ պատրուակ: Հռովմ յազգս մահացուցաց ուխտապահութեան կացցէ վարդապետ:

Լիկ. Սակայն զինչ լինիցի Հռովմայ, եթէ զիւր հայրն կորուսանէ:

Հռ. Ցուշ լիցի Հռովմայ՝ թէ իւր մահկանացու է հայր, թէ սասանի ուրեմն և նա՝ ի ներքոյ երկաթոյ, թէ կրէ և նա երակաց ցամաքութիւն. թէ արդ չունի այլ վիժել վասն նորա ոչ քիրան ինչ և ոչ ապաժոյժ. և թէ ոչ ինչ այլ մնայ նմա բայց մեռանել զմահ Հռովմայեցւոյ: Ա՜հ, բանն ինձ երկինք շաւիղ լուսաւոր. զկենաց իմոց բաղմամեայ նարօտ կարող եմ հատանել գովութեամբ, և դուք իմոյ անարգութեանն ցանկայք: Ոչ. յանհնարիցն է այդ. զիմոց Հռովմայեցւոցս ճանաչեմ զսիրտ: Որ միանգամ՝ ի լոյս կենաց հասեալ շնչեաց զսիւդ Կապիտոլիոնի՝ այլամիտ՝ ի Հռեգուղեայ լինել ոչ ունի: Զմի մի իւրաքանչիւր՝ ի ձէնջ գիտեմ, զի հանէ ինձ գովութիւն՝ ի սրտի իւրում. գիտեմ, զի նախանձ ընդ իս բերէ. և՝ ի յոյզս անդ խանդաղատական կրիցն՝ յորմէ պատրեցաւ, ուխտիւք պաղատի երկնից՝ ըզսոյն գործելոյ ունել բաւականութիւն: Ա՜հ, մի՛ և այլ, մի՛ և փոքրոգի թուլասրտութիւն. յերկիր, յերկիր զվրիպակ զէնդ. մի՛ և ընթացից յաղթանակիս արկանէք նահանջ. ո՛ բարեկամք իմ, որդեակք և քաղաքացիք. իբրև բարեկամ նպատա հայցեմ. յորդոր լինիմ իբրև քաղաքացի, և որպէս հայր հրաման տամ:

Աս. Ո՜հ ինձ, ահա ամենեքեան անսան նմա:

Պոպ. Աւա՜ղ. աւասիկ ամենայն ազ զինաթափ:

Լիկ. Ահա քեզ ճանապարհս ազատ համարձակ:

Հռ. Զեզ շնորհս խոստովանիմ, բարեբար ասուածք. է՜ մեր առաջի շաւիղ անխափան: Արի՛, ելՍմիլկար՝ ի նաւն. զհետ քո գամ և ես:

Ատիլ. (Ատ ուրեմն և ես սկսանիմ նախանձ բերել ընդ սմա):

Հռ. Ոգջմբ կացջիք, ո՛ Հռովմայեցիք, և ողջոյնս վերջին արժանի մեզ եղիցի: Գոհութիւն անմահիցդ, թողում զձեզ և թողում Հռովմայեցիս: Ա՜հ, անարատ պահեցէք զմեծ անունդ, և դուք եղիջիք իշխանք աշխարհի, և երկիր համբրէն՝ ի Հռովմայեցի փոխեսցի: Ատուածք, բարեփառ այսր նահանգի հովանաւորք, Էնէական զաւակին ատուածուհիք պահապանք, ձեզ յանձն առնեմ զժողովուրդս այս գիւցազանց՝ ի ձեր լեցին խնամս երկիրս այս, տունք և պարիսպք: Բնակաստցին յաւէրժ՝ ի սոսա արիութիւն, հաւատարմութիւն և փառք, արդարութիւն և զօրութիւն: Եւ եթէ ասող ինչ եղեռնաւոր ազգեցութիւնս չարեաց սպառնասցի Կապիտոլիոնի, ահաւասիկ Հռեգուղոս, ով դիք, Հռեգուղոս միայն ելցէ ձեզ՝ ի սպանդ. յիմ գլուխ թափեսցի սպառասպուռ ցասումն երկնաւոր. և Հռովմ ողջ անվնաս... Ա՜հ, արտասուք շարժին աստանօր: Մնասջիք խաղաղութեամբ:

ԿԵՐՋ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Պզտի՜ տղայ մըն է. — Տան մը դըրանը առջև մէկ ձիով կառք մը տեսայ, ու վրան եկեղեցականը՝ ձեռքը խաչ մը բռնած:

— Ո՞վ է մեռնողը, հարցուցի մէկու մը՝ որ նոյն տունը բնակողներէն մէկը կ'երևար:

— Չեմ գիտեր, պատասխան տուաւ ինծի, բաւական է որ այն մարդուն տըղան չըլլայ՝ որ երեք շաբաթ առաջ վարի յարկը եկաւ բնակեցաւ: Գիտեմ որ իրենիններէն մէկը հիւանդ էր: Սակայն որուն ալ ըլլայ, դագաղէն՝ պզտի տղայ մը կ'երևայ:

« Պզտի տղայ մըն է »: Ինչպիսի անհոգութեամբ և անզգայ սրտով շատ ան-